

ՇՆՈՐՀԱՌՐԱԳԻՐ ԱՍԵՆԱՊԱՏԻՒ ՊԱՏՐԻԱՐԶ ՀՕՐ ԿՈՂՄԵ

80-ամեակ Հ.Ե.Մ-ի

Ժողովուրդի մը ազգային կառոյցը կը կազմեն անոր կրօնը (մեր պարագային մեր Ազգային Եկեղեցին) եւ մշակոյթը իր բոլոր երեսներով (արուեստ, գիտութիւն, գրականութիւն եւայլն), իսկ ասոնց աղբյուր՝ կուսակցութիւններն ու քաղաքական կազմակերպութիւնները:

Բոլոր Հայ կազմակերպութիւնները անխտիր եղած են ծնունդը ժամանակի պահանջներուն եւ պայմաններուն: Անոնք ծնած ըլլալով ժողովուրդին իսկ ծոցէն՝ կոչուած են ծառայելու ազգին, իրաքանչիւրը իր հասկացողութեամբ եւ մօտեցումով, դնելով իրենց «Այրի Կոնջ» լուծման մեր ազգային գանձարանին մէջ:

80 տարիներ առաջ Մեծ Աղէտէն մազապուծ փրկուած ափ մը հայրողիներ, հեռատեսութիւն ունեցան Ս. Բաղաքին մէջ սկիզբը դնելու երիտասարդական մոր կազմակերպութեան մը, մո'ր շունչ, մո'ր կեանք եւ մո'ր իմաստ տալու Եղեռնէն վերապրած եւ Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանէն ներս ծուարած գաղութին: Այդ կազմակերպութիւնը պիտի զար իրացնելու Հայ Երիտասարդաց Միութիւն անունը, իրեն նպատակակէտ ունենալով պատրաստել տիպար երիտասարդ սերունդներ, անոնց ջանքելով ֆիզիքական, մտային եւ բարոյական դաստիարակութիւն: Անցնող Ութսուն տարիներուն Հ.Ե.Մ-ը, նման մեր ազգային միւս կազմակերպութիւններուն,

ունեցաւ իր փառքի օրերը եւ ինչու չէ իր վերիկայալումները, եւ իւրաքանչիւր յորեկմական հանդիսութիւն առիթ մը կ'ընծայէ տունեալ կազմակերպութեան վերատեսութեան ենթարկելու եւ վերաքննելու ինքզինք տեսնելու թէ ան որքանով հաւատարիմ մնացած է իր հիմնադիրներու սկզբունքներուն եւ այդ նոյն կազմակերպութեան երբեմնի արժէքներուն:


Հ.Ե.Մ-ի նախկին ղեկավարներէն մին յայտարարած էր թէ իրենց տարիներ առաջ վառած ջահը միշտ վառ պիտի մնար: Այդ օրէն ի վեր անցած է զրեթէ կէս դար եւ այժմ Չե'ր, ներկայ ղեկավարներու ճիտին պարտքն է նայիլ անցեալին հպարտութեամբ եւ ապա նայիլ ներկային տեսնելու թէ Հ.Ե.Մ-ի այժմու սերունդը որքանով արդարացեցած է իր նախնիներուն յոյսերն ու երազները:

Մարդկային պատմութիւնը սիրելի Հ.Ե.Մ-ական-ներ, մանկական հեքիաթներու հսկան է, եւ մարդկութիւնը՝ անոր ուսերուն նստած գաճաճը, որ կը փորձէ տեսնել հեռուն, ապագան: Ութսուն տարիներ ետք հեքիաթի գաճաճին նման, Հ.Ե.Մ-ի ղեկավարները նստած պատմութեան ուսերուն, պարտին նայիլ հեռուն՝ դէպի փառայեղ հարիւրամեակ մը, բայց միշտ կառչած իրենց, հիմնադիրներու հայաշունչ ոգիին եւ ազնիւ սկզբունքներուն, հեռու նկարագրի խաթարող անձնական հաշիւներէ:

Այս առիթի սրտանց կը շնորհատրեմ Հ.Ե.Մ-ի բոլոր անդամ-անդամուհիները, եւ ձեզի կը մաղթեմ ամենայն բարիք եւ յաջողութիւն:

Նուրիան Արք. Մանուկեան
Պատրիարք Հայ Երուսաղէմի

Վերածնունդ Հայրենիք Հայ Մշակոյթ



ՀԵՄ-ի «ԹԵՔԵԱՆ» սրահի մոր որմնանկարները
Գործ Արամ Համբարեանի